

**Տ. ՌՈՒԲԵՆ ԱԲԵՂԱ ԶԱՐԳԱՐՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻՆ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(25 մայիսի 2006 թ.)

*«Եւ ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ զամենայն
աւուրս՝ մինչեւ ի կատարած աշխարհի»:*

*«Եվ ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝
մինչև աշխարհի վախճանը»:*

(Մատթ. ԻԸ 20)

Սիրելի քույրեր և եղբայրներ ի Քրիստոս.

Քիչ առաջ Սուրբ և Սրբաբար այս Խորանից Ավետարանը Տիրոջ շուրթերով հիշեցնում էր, որ Աստված մեզ հետ և մեր մեջ է, որ աստվածային սերն ու խնամքը հարատև է աշխարհիս վրա, որ արարչական զորությունն այժմ էլ արարչագործում է արարածներիս մեջ:

Տակավին քառասուն օրեր են անցել այն պահից, երբ Քրիստոսի մարմինը փնտրողների համար ազդարարվեց, թե՛ «Այստեղ չէ, այլ հարյավ» (Ղուկ. ԻԴ 6): Քառասուն օրերի ընթացքում էր, երբ Փրկչի հարության կասկածը փարատվեց Տիրոջ իսկ վկայմամբ, թե՛ «Տեսե՛ք Իմ ձեռքերն ու ոտքերը...» (Ղուկ. ԻԴ 39): Քառասուն օրերի ընթացքում էր, երբ անհավատության մշուշը ցրվեց Թովմասին ուղղված այն հավաստմամբ, թե՛ «Բե՛ր քո մատները և դի՛ր այստեղ ու տե՛ս Իմ ձեռքերը... անհավատ մի՛ եղիր, այլ հավատացա՛յ» (Հովհ. Ի 27): Այսօր էլ, հրաշալի այս հինգշաբթի օրը, Տերը Համբարձման հրաշափառ խորհրդի միջից հեռացնում է մեզնից միայնակ մնալու երկմտանքը, երկյուղն ու տխրությունը՝ ասելով. «Ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»:

Քրիստոսի Համբարձումը հանդիսավոր եզրափակումն է Իր հետ հարության երևումների, վերջնական կնիքը՝ Իր փրկագործ տնօրինության, աշխարհից Իր տեսանելի բաժանումը՝ աներևույթ մնալու մինչև աշխարհի վախճանը:

Սիրելիներ.

Եթե Հիսուսի Հարությունը համեմատության մեջ արևածագն է, ապա Համբարձումը՝ արևի մայրամուտը: Երկու դեպքում էլ նույն արևն է, աշխարհից դուրս ո՛չ արևածագ կա, ո՛չ էլ մայրամուտ, սոսկ արևն ինքն է՝ անփոփոխ ու նույնական՝ իր լույսով ու ջերմությամբ: Արևը մշտապես մեզ հետ է եղել մեր սկզբնավորման օրվանից ի վեր, այսօր էլ՝ այս պայծառ առավոտ, մեզ հետ է, վաղը նույնպես մեզ հետ է լինելու:

Նույնն է պարագան Քրիստոսի. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս» (Եբր. ԺԳ 8): Առաջին քրիստոնյաները Հիսուսին կարող էին հանդիպել տարբեր տեղերում. Ս. Ստեփաննոսը Նրան տեսավ երկնքում, Պողոս առաքյալը՝

Դամասկոսի ճանապարհին: Նրա հետևորդները զգացին Նրա ներկայությունը հրեական ատյանների առջև, Հայաստանի խոր վիրապնեցում ու հնձաններում և հատկապես հենց այս Միաձնաէջ սրբարանում: Որքա՛ն ազգեր, որքա՛ն ժողովուրդներ են նույն հափշտակությամբ իրենց աչքերը բարձրացրել դեպի Տերը, ինչպես առաքյալները արեցին Ձիթենյաց լեռան վրա Համբարձման պահին:

Միրելի՛ բարեպաշտ ժողովուրդ.

Ահավասիկ հարյուրամյակների հեռավորությունից մենք էլ կանգնած ենք մեր Տիրոջ Համբարձման խորհրդի առջև: Մենք էլ առաքյալների պես հարց ենք ուղղում. «Տե՛ր, այս ժամանակո՞ւմ է, որ վերահաստատելու ես թագավորությունդ» (հմմտ. Գործք Ա 6): Եվ ահա լսում ենք Տիրոջ պատասխանը. «Ձեզ տրված չէ իմանալ այն ժամերը և ժամանակները, որ Հայրը հաստատեց Իր իշխանության մեջ» (Գործք Ա 7): Հետևապես, մոլորյալ ու մոլորեցնող են բոլոր նրանք, ովքեր անօգուտ հաշվարկ են կատարում Քրիստոսի Երկրորդ գալստյան և աշխարհի վախճանի վերաբերյալ, չե՞ որ Տերը մեզ այլ բան է պատվիրում. «Երբ Սուրբ Հոգին իջնի ձեզ վրա, զորություն պիտի առնեք և Ինձ վկաներ պիտի լինեք...» (Գործք Ա 8):

Տեսնո՞ւմ եք, մենք Տիրոջ վկաներն ենք, ոչ այն վկաների պես, ովքեր արմագեղոնով են սարսափեցնում մարդկանց՝ իրենց կամքին ծառայեցնելու համար, այլ վկաներն ենք փրկագործության՝ Տիրոջ մարդեղության, քարոզության, չարչարանքների, խաչի, թաղման, Հրաշափառ հարության ու համբարձման: Վկաներն ենք երկրի վրա Տիրոջ անտեսանելի ներկայության: Վկաներն ենք՝ արտացոլելու Քրիստոսի պատկերը, մեր ընկերասիրության միջոցով վկայելու Աստծո անբավ մարդասիրությունը, մեր խոնարհության միջոցով վկայելու Տերունական խաչի զորությունը, մեր հավատքի միջոցով վկայելու Քրիստոսի հարության ճշմարտությունը, մեր հոգևոր վերելքի միջոցով վկայելու Տիրոջ համբարձման փառքը: Զե՞ որ վկայել Քրիստոսին՝ նշանակում է ընթանալ խաչի ճանապարհով, չե՞ որ վկայել՝ նույնն է, թե մարտիրոսվել ճշմարիտ ու արդար կյանքի համար: Խաչի ու մարտիրոսության ճանապարհն է տանում դեպի Հարություն և Հարությունից՝ Համբարձում: Եկեղեցու սրբերը իրենք իսկ մկրտությամբ վկայեցին Քրիստոսի Ծնունդը, խոսքով՝ Քրիստոսի լույսը, չարչարանքներով վկայեցին Քրիստոսի խաչը, նահատակությամբ՝ Քրիստոսի հարությունը, այժմ էլ իրենց բարեխոսությամբ վկայում են Քրիստոսի համբարձումը:

Իրապես, մեր կյանքում էլ Հիսուս անմահ է, որովհետև ներկա է, անմահ է ոչ միայն անունով ու պատմության մեջ թողած ազդեցությամբ, այլև Իր այժմեական ներկայությամբ ու ներգործությամբ: Հիսուսի անմահության երաշխիքը երկրի վրա Սուրբ Եկեղեցին է, աշխարհի փրկագործության մասնակիցներն էլ մենք ենք: Ահավասիկ բացվում է երկինքը, և Քրիստոս իջնելով բազմում է Սուրբ Սեղանին: Ահավասիկ երկնքի ողջ զորքն աներևութապես երկրի վրա է՝ Սուրբ Սեղանի շուրջ բոլորած՝ մեզ հետ սպասավորելու Աստվածորդու կենարար Մարմնի ու Արյան սրբագործմանն ու բաշխմանը: Ահավասիկ այստեղ է Աստծո արքայության մուտքը. «Աստծո արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս, և չեն ասի, թե՛ ահա այստեղ է կամ այնտեղ, որովհետև Աստծո արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. ԺԷ 20-21), - ասում է մեր Տիրոջ ձայնը: Մենք այդ արքայության վկաներն ենք:

Հետևապես, սիրելի հավատացյալներ.

Հոգևոր անկումից վեր բարձրանանք՝ մեղքից բաժանվելու, ինչպես Քրիստոս երկինք բարձրացավ՝ մահկանացուներիցս բաժանվելու: Այլապես մեղքի մեջ ընկղմված՝ կարող ենք սոսկ սատանայի ու չարի վկան լինել: Մեղքից վեր բարձրանանք՝ մեր դրախտային նախկին փառքը վերագտնելու, ինչպես Քրիստոս երկինք բարձրացավ՝ Իր նախկին փառքի մեջ վերհաստատվելու: Այլապես ինչպե՞ս պետք է դիմավորենք Հոգեգալուստը, ինչպե՞ս պետք է գործություն առնենք ու Տիրոջ վկաները լինենք: Չէ՞ որ Սուրբ Հոգին իջնում և Իր սրբաբար գործությունն է փոխանցում այնտեղ, որտեղ մաքրություն կա, հավատ կա, սեր կա: Չէ՞ որ նախ մենք պետք է փոխվենք, որ ի գործու լինենք մեր շուրջը փոխելու: Չէ՞ որ հարության ու համբարձման վկա առաքյալները ամբողջապես փոխակերպվեցին, որ ի գործու լինեն աշխարհը փոխակերպելու: Ուրեմն Տիրոջ Համբարձման խորհուրդը փոխակերպության մեջ է, Սուրբ Հոգով գործանալու պատրաստության մեջ է, վկայելու մեջ է, Քրիստոսին մեր մեջ ապրեցնելու մեջ է:

Սակայն ակամայից մտածում ենք, թե ո՞րն է մեր Ձիթենյաց լեռը, որտե՞ղ տեսնենք Համբարձման հրաշքը:

Ահավասիկ Հայոց Եկեղեցին է հայի Ձիթենյաց լեռը, երկնքի ու երկրի հանդիպման վայրը, որտեղ ամեն մեկս յուրովի է ապրում Համբարձման խորհուրդը: Հայոց եկեղեցին իր ամեն մի քարի տակ, բանաստեղծի բնորոշմամբ՝ «դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամբա մը ունի»: Այստեղից է Տերը մեզ առաքելության կոչում. «Գնացեք ուրեմն, աշակերտ դարձրեք բոլոր ազգերին»: Այստեղից է Տերը մեզ վերածնվելու կոչ անում. «Մկրտեցեք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով»: Այստեղից է Տերը մեզ Իր խոսքով ապրելու պատգամ հղում. «Ուսուցանեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի», և վերջապես՝ այստեղից է Տերը հիմա մեզ Իր գործությունն ու ներկայությունը փոխանցում. «Եվ ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»:

Սիրելի հայորդիք.

Հայ Եկեղեցին Համբարձման տոնը միահյուսել է ազգային մի կարևոր հիշատակի հետ: Այսօր Հայոց Հայրապետական Աթոռի՝ Կիլիկիայի Սիս քաղաքից Ս. Էջմիածնում վերահաստատելու հիշատակի օրն է նաև: 1441 թ. էր, երբ Հայրապետական Աթոռը, երկարատև դեգերումներից հետո, վերջնականապես հանգրվանեց Միածնաեջ իր սրբավայրում: Թեև մեր Հայրապետները պատմության ծանր պայմանների թելադրանքով տեղից տեղ հանգրվանեցին, սակայն Միածնաեջ այս սրբավայրը իր խորհրդով ու նշանակությամբ մնաց անփոփոխ:

Կյանքի հազարամյա փորձն է հայ ժողովրդին ուսուցանել, թե՛ «Զամենայն ազգս Հայոց կապեալ կա ի վերայ աջոյն Սրբոյն Գրիգորի եւ Սրբոյ Էջմիածնի» և որ «Որտեղ մարմինն է, այնտեղ էլ արծիվներն են հավաքվում» (Ղուկ. ԺԷ 37): Անտարակույս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է Տիրոջ վկան ու թարգմանը՝ հայ ժողովրդի կյանքում՝ Լուսավորչի կանթեղի լույսով և իր շնորհագարդ գահակալի ջահակրությամբ:

Ուստի և նրա արժանընտիր Գահակալի տոնն է նաև այսօր: Որդիական խոնարհությամբ շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը և աղոթակից ողջ միաբանությանն ու հավատավոր մեր ժողովրդին, մաղթում ենք Վեհափառիդ կյանքի արևշատ, երկարատև գահակալության օրեր՝ աղոթելով. «Բարեխօսությամբ վերին Քո զօրաց, Տեր, միշտ անշարժ պահեալ զԱթոռ Հայկազնեաց». ամեն: